բաժանորդութեան կացուցանել Լուսարար 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, որպէս Յոյնք, Դատաւորն անհընարին վարկաւ զայն խնդիր, զի Յոյնք վասն այնր ունէին Խօճրճէ Շէրէֆ, և չեղեւ: Ասացին Հայք վասն տեղեաց ոմանց, զորս խառնեալ էին Յոյնք 'ի տեղիս իւրեանց, և վասն փայտակերտ վերնատան կանանց եւ սենեկաց, զորս չէին շինեալ, եւ զայլս խափանեալ հաստ որմովք: Այլ Դատաւորքն ասացին թէ արտաքոյ իշխանութեան մերոյ են այդպիսի խնդիրք, որպէս գրեալ է 'ի հրովարտակին, որ և մնաց անկատար, մինչ չհամարձակիլ Իլամ եւս տալ: Սակայն զոր ինչ խօսեցան Յոյնք 'ի ժողովի աստ ընդդէմ Տէրութեան եւ հրովարտակին չհամարձակիմք գրել, զի լռութիւն Դատաւորաց առաւել համարձակութիւն տայր նոցա, 'ի հարցանել վերստին Դատաւորաց՝ թէ այլ եւս զի՞նչ ունիք. Հայք ասացին, ընդէ՞ր է ձեզ հարցանել եւ մեզ տալ պատասխանի ընդունայն, զի ոչ զսեփհական տեղիս և ոչ զբաժանորդս հաստատեցիք և ետուք մեզ, և եթէ կամիք ձգել ակնարկութիւն ինչ 'ի վերայ եկեղեցւոյն մերոյ 'ի Վերնատան, հրամայեցէք: Ելին անդ բազմութեամբ և ուշի ուշով զննեալ զամենայն տեղիս ծանեան զվնասն, եւ զարմացեալ ընդ անխիղճ անգթութիւնս Յունաց շարժէին զգլուխս իւրեանց, մանաւանդ Դատաւորն, զի գիտէր զառաջին դիրս տեղւոյն, այլ չէին ձեռնհաս առնել ինչ, այլ միայն հրամանաւ եւ վերակացութեամբ նոցին շինեցին Հայք զխաչկալս երկուց խորանաց, եւ զերկաթի վանթակս դասուց, և զհամառօտ խաչկալս Յովսէփ Արեմաթացւոյ և Հանդերձ բաժանման խորանաց, և այլն ամենայն մնաց անկատար, ոչ պահարան և ոչ դարան:

Ահաւասիկ այլայլեալ և յափշտակեալ տեղիքն 'ի Յունաց, Մատուռն Ադամայ 'ի ներքոյ Գողգոթայի, ուր էին գերեզմանք Լատին Թագաւորաց, կամարաւ ծածկեալ՝ 2 կանգուն երկարեցին, և զսենեակ տեսչին Յունաց անդ 1 կանգուն 'ի լայն և 2 յերկայն ընդարձակեցին: Արտաքոյ սորին 'ի ներքոյ սեղանատան Հայոց մի որձարան արարին, եւ զտեղի աղբիւսին 'ի յետուստ մեծի դրան, շինեցին քարեայ աստիճան ելանել 'ի տարածման տեղին. նոյնպէս